# ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԵՐՈՍ ԳՐՈՂԸ

## ՄԱՐԻԵՏԱ ՇԱՀԻՆՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 125-ԱՄՅԱԿԸ



Սոցիալիստական աշխատանքի հրոս, Լենինյան, Ստալինյան մրցանակների դափնեկիր Մարիետա Շահինյանի ավանդը սովետական գրականության պարգացման մեջ հարուստ է ու բազմազան: Նա իր մեջ մարմնավորում էր ականատագետին ու գիտնականին: Նրա գիտելիքները համրագիտարանային էին. գիտեր հին ու նոր փիլիսոփայությունն ու պատմությունը, գրականությունն ու արվեստը, լեզուներ ու երաժշտություն: Չկար համարյա գրական որևէ ժանր, որով նա հանդես եկած չլիներ:

Մարիետա Շահինյանը ստեղծագործել է գրեթե ութսուն տարի... Երկար տարիների միջով ձգվում է նրա գրական ուղին՝ 1903 թվականին հրատարակված "Գելենջիկյան մոտիվներից" մինչև 1981 թվականին լույս տեսած հանրագումարային "Հարյուրամյակն ափի մեջ" խորհրդանշական գիրքը: Եվ ոչ մի տարի, ոչ մի ամիս ընդմիջում: Գուցե թե՝ ոչ մի շաբաթ: Նա աշխատում էր առանց հոգնելու, երբ նույնիսկ հիվանդությունը որոշ ժամանակով զամում էր անկողնուն: Դժվար է ընդգծել Մարիետա Շահինյանի ստեղծագործությունների շրջանակը, այն անսովոր լայն է. բանաստեղծ, վիպասան, դրամատուրգ, հրապարակախոս, ակնարկագիր, գրականության և արվեստի տեսաբան, երաժշտագետ... նրա ստեղծագործությունը ընդգրկում է և բազմաժանր, գիտելիքները՝ համրագիտարանային: Նա գրել է շուրջ 100 գիրք: Նա մեր ամենալուրջ, խորունկ գրողներից է, ում գրքերն իրենց փիլիսոփայական հարցադրումներով պատկանում են ոչ միայն ներկային, այլև ապագային: Ականավոր գրողի բեղմնավոր, երկարամյա գրական գործունեությունը խիկական աշխատանքային սխրանք էր:

Ծնվել է Մարիետա Շահինյանը Մոսկվայում, 1888 թվականի ապրիլի 2-ին, բժշկական գիտությունների դոկտոր Սերգեյ Շահինյանի ընտանիքում: Սերգեյ (Սարգիս) Շահինյանը ավարտած լինելով Լազարյան ճեմարանը, հիանալի գիտեր հայրենի գրականությունն ու պատմությունը և հենց նա էլ առաջինն է փոքրիկ Մարիետայի հոգում սեր առաջացրել գրականության հանդեպ: Մայրը՝ Փեփրոնեն, Նոր Նախիջևանի Խլիտչյան գերդաստանից էր, որն իր պատմության ընթացքում տվել է երևելի երաժիշտներ ու մաթեմատիկոսներ: Ընտանիքում խոսում էին ռուսերեն, սակայն երեխաներին սովորեցնում էին հայերեն գրել-կարդալ: Շահինյանների ընտանիքը մի յուրահատուկ հավաքատեղի էր, ուր լինում էին ժամանակի առաջադեմ մտավորականները, մի բան, որ կարևոր նշանակություն է ունեցել Մարիետա Շահինյանի գրական ճակատագրում:

1902 թվականին, հոր մահից հետո, ընտանիքը ընկնում է կարիքի մեջ: Վաղ պատանեկության տարիներին Մարիետան ստիպված էր վաստակել իր ապրուստը. սակայն ուսումը չի ընդհատում, անընդմեջ սովորում էր: Ավարտեց ռուսական գիմնազիան, ապա Գերյեի կանանց բարձրագույն դասընթացների պատմափիլիսոփայական ֆակուլտետը: Ուսումնասիրում էր արևմտաեվրոպական լեզուներ:

Մարիետա Շահինյանի առաջին տպագիր ելույթը մամուլում կայացել է 1903 թվականին, երբ "Չերնոմորսկոյե պոբերեժյե" լրագրում հրատարակվեց նրա "Գելենջիկյան մոտիվներ" չափածո ֆելիետոնը: Ապագա գրողն այն ժամանակ ընդամենը տասնհինգ տարեկան էր: Միաժամանակ նա ստիպված կատարում էր բազմապիսի աշխատանքներ, թարգմանություններ, տալիս էր մասնավոր դասեր, գրում էր հոդվածներ բանվորական թերթերի համար:

1909 թվականին լույս է տեսնում Մարիետա Շահինյանի բանաստեղծությունների առաջին ժողովածուն՝ "Առաջին հանդիպումները" խորագրով, իսկ 1913-ին՝ երկրորդը "Օրիենտալիա", որը մեծ համբավ է բերում սկսնակ գրողին: Ժողովածուն կարճ ժամանակամիջոցում մի քանի անգամ վերահրատարակվում է: Աշխարհայացքի բեկում է նկատվում ոչ միայն այս գրքում, այլ նաև նրա հրապարակախոսական ու քննադատական հոդվածներում: Նա գրում է պատմվածքներ, վիպակներ, դրամաներ, գրականագիտական, քննադատական և փիլիսոփայական հոդվածներ: Ռուսերեն է թարգմանում Սմբատ Շահազիզի, Հովհաննես Հովհաննիսյանի, Ալեքսանդր Ծատուրյանի, Ավետիք Իսահակյանի բանաստեղծությունները:

1914 թվականի ամռանը, առաջին համաշխարհային պատերազմից մի քանի շաբաթ առաջ, արդեն հայտնի գրողը մեկնում է Հայդելբերգ (Գերմանիա) մագիստրոսական դիսերտացիա պաշտպանելու: Նա որոշում է ոտքով անցնել բոլոր այն վայրերով, որոնք կապված են Գյոթեի կյանքի ու գործունեության հետ: Սակայն պատերազմը սկսվելուն պես, որպես ռուսահպատակ նա ձերբակալվել է և արտաքսվել երկրից, անցել է Շվեյցարիա, վերադարձել Ռուսաստան, բնակություն հաստատել Նոր Նախիջևանում, կոնսերվատորիայում դասավանդել արվեստի պատմություն և գեղագիտության ներածություն:

Հոկտեմբերյան հեղափոխությունը Մարիետա Շահինյանը դիմավորում է Դոնի Ռոստովում: Նա դառնում է սովետական առաջին տեքստիլ-ուսումնարանի հիմնադիրը Ռուսաստանի հարավում: Սկսում է շրջել ագիտկոլեկտիվների հետ կազակական գյուղերը և օգնել վերականգնելու քայքայված տնտեսությունները: Այդ ընթացքում նա եղել է նաև հայկական գյուղերում և կարճ ժամանակ նույնիսկ ապրել Չալթրում:

1920 թվականին Մարիետա Շահինյանը մեկնում է Պետրոգրադ և "Իզվեստիա" թերթում հանդես գալիս հոդվածներով: Նորաստեղծ սովետական իշխանության տարիներին տեսածն ու ապրածը, քաղաքացիական կռիվները առատ նյութ են տալիս ստեղծագործելու: Մեկը մյուսի ետևից լույս են տեսնում նրա վեպերը. "Փոփոխություն", "Բարձր դասի կնոջ արկածները", "Ագիտվագոն" պատմվածքը: Մարիետա Շահինյանը "Պրավդայի" խմբագրությունից ստանում է մանդատ և մեկնում Անդրկովկաս՝ երկարատև գործուղման:

Տաղանդավոր գրողն իր արկածներում պատմում է այն նորի մասին, որ տեղի է ունենում Հայաստանում և նրա հարևան հանրապետություններում: "Սովետական Հայաստան" գիրքը առաջինն էր, որ համառուսաստանյան մասշտաբով պատմում էր Հայաստանի մասին: 1924-1925 թվականներին Ջիմ Դոլլար կեղծանունով Մարիետա Շահինյանը սկսել է լույս ընծայել "Մես-Մենդ" առաջին սովետական հակաֆաշիստական արկածային վիպակների շարքը, որոնք տպագրվել են անշխարհիկ բազմաթիվ լեզուներով:

1927 թվականի վերջերից Մարիետա Շահինյանը հաստատվել է Հայաստանում որպես "Պրավդայի" թղթակից: Այդ ժամանակ կառուցվում էր Ձորագէսը՝ հանրապետության առաջին հիդրոէլեկտրակայաններից մեկը: Շահինյանը գնում է Քոլագերան, չորս տարի ապրում շինարարների հետ բարաքներում, ուր "չկար ոչ մի հարմարություն, տանիքի անցքերից երևում էին աստղերը", քնում էր մուշտակով, ման գալիս ձիով: 1930-1931 թվականներին հրատարակվում է նրա "Հիդրոցենտրալ" վեպը, սոցիալիստական շինարարության, մարդկանց նոր փոխհարաբերությունների մասին "արդյունաբերական վեպի" առաջին նմուշներից մեկը: Հետագայում հիշելով այդ օրերը, Մարիետա Շահինյանը գրել է. "Հիդրոցենտրալը" ոչ միայն գրված երկ է, այլև ապրած կյանքի մի կտոր":

Հայաստանի իրականությունը միշտ էլ եղել է ականավոր գրողի հետաքրքրություններից մեկը: Մի առիթով հայկական թեմաներով իր գրվածքների մասին այսպես է արտահայտվել. "Ես ուզում եմ, որ յուրաքանչյուր հայ, որտեղ էլ որ լինի, կարդալով այս գիրքը ("Հիդրոցենտրալ"), ցանկանա գալ Հայաստան, տեսնել այն, շնչել նրա օդը, զգալ իր ոտքերի տակ նրա հողը: Եթե իմ գրքին հաջողվի հույզ հայի սիրտը, ես կհամարեմ, որ կյանքս իզուր չեմ անկացրել": Մ. Շահինյանը ականավոր գիտնական էր, Հայաստանի գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ:

1942 թվականին նշանավոր գրողը գործուղվել է Ուրալ, գրել կրքոտ հոդվածներ ու ակնարկներ, որոնք ամփոփվել են "Ուրալը պաշտպանության մեջ" (1944) գրքում: Ետպատերազմյան ուղևորությունների արգասիք են նրա "Հնգամյակի ուղիներով" ստեղծագործությունը և "Ճանապարհորդություն Սովետական Հայաստանում" հանրահայտ գիրքը, որը 1951 թվականին արժանացավ ՍՍՀՄ պետական մրցանակի, թարգմանվեց բազմաթիվ լեզուներով: Նշանակալից է նաև նրա "Ուլյանովների ընտանիքը" քառահատոր աշխատությունը:

Անչափ մեծ էր անվանի արվեստագետի հետաքրքրությունների ոլորտը: Նա չի սահմանափակվել միայն հայ և ռուս իրականություններով: Զբաղվել է ուկրաինական մեծ բանաստեղծ Տարաս Շևչենկոյի կյանքի ու գործունեության մի շարք, մինչ այդ չլուսաբանված հարցերի ուսումնասիրությամբ, որի համար 1944 թվականին նրան շնորհվել է բանասիրական գիտությունների դոկտորի աստիճան: Նրա գրչին են պատկանում նաև Գյոթեի, Նիզամիի, Յա. Հաշեկի, Ի. Կռիլովի, Մ. Նալբանդյանի, Ալ. Շիրվանզադեի և "Կալևալա" ֆիննական էպոսի մասին մենագրություններ, հոդվածներ գրականության և արվեստի գործիչների մասին: Մոռացված չեն տաղանդավոր կոմպոզիտոր Յո. Միսլիվեչեկի կյանքին է նվիրված նրա "Հարություն՝ մեռյալներից" վիպակուսումնասիրությունը, որի համար Մարիետա Շահինյանը պարգևատրվել է Չեխոսլովակիայի ոսկե մեդալով:

Մարիետա Շահինյանն ակնարկի ամենաաչքի ընկնող ներկայացուցիչներից է: "Հնգամյակի ճանապարհով" գիրքը դրա վառ վկայությունն է:

Հայրենիքը բարձր է գնահատել Մ. Ս. Շահինյանի ծառայությունները մեր բազմազգ գրականության պարգացման գործում: Նրան շնորհվել է Սոցիալիստական աշխատանքի հերոսի բարձր կոչում: Նա պարգևատրվել է Լենինի երկու, Աշխատանքային Կարմիր դրոշի երեք, Ժողովուրդների բարեկամության, Կարմիր աստղի, "Պատվո նշան" և այլ շքանշաններով ու բազմաթիվ մեդալներով:

Մեծանուն գրողն ապրեց մինչև խոր ծերություն: Նա մահացել է 1982 թվականի մարտի 20-ին, Մոսկվայում, 94 տարեկան հասակում: Թաղված է Հայկական գերեզմանոցում: